ճուան անուանեալ թաղի, որ յետոյ դեսպանաց ընդունարան եղաւ, և այնպէս այլ կոչուեցաւ (Տար էզ-զիյաֆաթ)[1]։ Իր մեծոգի և գոռոզ որդին և յաջորդն Շահնշահ, որ խալիֆայէն աւելի փառօք և զօրութեամբ կ'ապրէր[2], գոհ չեղաւ իւր հօր շինածովը. այլ արքունեաց և պետական շինուածոց հիւսիսային արեւելեան անկեան ընդարձակ կողմ մի գրաւելով, իբր 15 քառակուսի բնամղոն (քիլոմետր), շինեց հոյակապ ամենաճոխ նոր վզբրկարան ապարանք մի, որ իր արաբական անուամբ կոչուեցաւ Տար էլ-Ֆիզայիյէ, և շէնքին զմբէթներուն համար՝ սովորաբար կոչուէր Տար էլ-Քուպպայ (Գմբեթաւոր[3] ապարանք), և աւելի յաճախ՝ Տար էլ-Վէզիրահ էլ-Քուպրա. Շահնշահի ամենայն յաջորդ վը-

1. Իր շինածներէն Մեսցած է դեռ Զուէյիլա կոչուած մեծ դուռն, քաղքին հարաւ-արեւելեան կողմը։

2. Կերպով մի խալիֆայ ժամանակին երախտապարտ էր Շահնշահի. ասոր հայրն և Մոսդանդիր խալիֆայն մէկ տարուան (1094) մէջ մեռան. Եգիպտացիք փոխանակ անոր Նիզար անդրանկան՝ երկրորդ որդին (Մոսդալի պիլլահ) ընտրեցին. Ֆիտաքին մեծ էմիրն ուզեց պաշտպանել զՆիզար. Շահնշահ դէմ ելաւ, յաղթեց, զերկուքն ալ բռնեց, և ապահովեց զՄոսդալի։

3. Մինթէ այսպիսի վայելչութեանն՝ եթէ բաղնեացն համար էր՝ որ Ատանայի մօտիկ տեղ մի Գմբեթաւոր կոչուէր, մեծին Լեւոնի օրերէն ինչուան իր յաջորդաց վերջն այլ (Տ. Սիսուան, 64. 533. 541)։